

լուն վրայ : Լըրեկոյեան դէմ Բարիզ հասնելով ուրիշ ձիերու հետ մէկտեղ ախոռ դրուեցաւ : Ձին մինչև երկրորդ օրը տխուր ու լքեալ կերպով մը կեցած՝ ամենեւին կերակուրին քով չմօտեցաւ , թէպէտև քանի որ մէկալ ձիոց հետ մէկտեղ էր ամենեւին կատաղութեան նշան մը չցըցուց , ու երբեմն երբեմն ոտքերը գետին կը զարնէր միայն :

Լըրկորդ օրը , երբոր մէկալ ձիերը աշխատութեան տարուեցան ու ինքը մինակ մնաց , իր թմբուլութենէն արթննալով սաստիկ կատաղութիւն մը վրան եկաւ , աչքերը կրակ կտրեցան և դէմքն ալ այլայլեցաւ , ու խրինջալով և բարկութեամբ ոտքերը գետին կը զարնէր : Տանկարծ ակընթարթի մը մէջ անանկ սաստիկութեամբ ծնկուրնէրուն վրայ գետին ինկաւ որ ոտուրները փասուեցան . վերջը նորէն ոտք ելելով քիչ մը հանդարտեցաւ : Ըն ատեն առջևը խոտ դրին՝ բայց չկերաւ ու մերժեց , և նորէն կատղեցաւ , և սաստիկ անձկութեան մը մէջ կը տեսնուէր . առջևի յարդը կատաղութեամբ մը ակռաներովը ծառիւն ետև նորէն դուրս կը հանէր . անանկ ուժով կը խածատէր իր մարմինը որ կաշին սկըծելով արիւն լլայ կ'ըլլար . աս կերպով մերթ կը հանդարտէր ու մերթ կը կատղէր . սա կայն վերջապէս արիւն քրտինք մտած կարողութենէ իյնալով կիսամեռ ինկաւ մնաց : Տէրը քանի մը նշաններէ անոր կատաղութեան ինչ բանէ առաջ դալը իմանալով ուզեց Լըֆօրի ձիակըրթարանը խաւրել :

Հոն հասնելով՝ առանձին ախոռ մը դրուեցաւ ուր որ առջի բերան հոն ալ նոյն բաները պատահեցան . ձիակըրթարանին վարժիչները զինքը քալեցընելու տարին , բայց ամենեւին վիճակին վրայ փոփոխութիւն մը չեղաւ . եթէ չոր խոտ կամ վարսակ տային , ախորժով կուտէր՝ և ախորժով ալ կը խմէր , բայց միշտ անհանգստութիւն ու նեղսրտութիւն մը վրան կը տեսնուէր :

Ընկէ ուրիշ ախոռ մը տարին ուր կային ուրիշ ձիեր ալ . հոն երկայն ա-

տեն ամենեւին կատաղութեան նշան մը չտալէն ետև , կամաց կամաց նորէն իր առջի հանդարտութիւնը գտաւ , քովի ձիուն վրայ գութ և սէր ձգելով :

Բայց ասկէ ալ հանելով ձիարձակարան մը տարին՝ ուր նորէն մինակ մնաց . ան պատճառաւ փախաւ հոնկէ ու վազելով կ'ուզէր ուրիշ ախոռ մը մտնել ուր որ այլ և այլ ձիեր կային : Լըբոր նորէն իր տեղը դարձուցին , նեղսրտութեան ու կատաղութեան նշաններ սկըսաւ նորէն վրան ցուցընել : Բայց քանի մը օրէն սկսաւ կամաց կամաց հանդարտիլ . և կարծես թէ երբ ուրիշ ձի մը կը տեսնէր՝ կը զուարթանար : Ընգամ մը ճամբան երթալու ատեն այն ձիուն պատահեցաւ որուն քով կեցած էր հին ախոռին մէջ . մէկէն քովը վազեց , բայց անանկ կատաղութեամբ մը որ կարծեցին թէ խածնելու կ'երթար . երբոր մօտեցաւ՝ զուարթութեամբ մը քովը կեցաւ , լզեց և ուրիշ սիրոյ նշաններ ցոյց տալէն ետքը՝ երբ անիկայ իր ընթացքը առաջ տանելով հեռացաւ , ինքը տխրութեամբ կեցած կարծես թէ ամենեւին չէր ուզէր անկէ հեռանալ : Բայց բռնութեամբ նորէն զինքը ձիակըրթարանը խօթեցին , ու վերջապէս ուրիշ բանով չանցաւ իրեն այս հիւանդութիւնը , եթէ ոչ երևակայութիւնը հանդարտելով ու իրեն կիրքը մարելով , որով կրցան նորէն իր տիրոջը դարձընել :

Բարոյական առածք :

Երբ որ անյագ կիրքերն ու յօժարութիւնները կը նմանին ան հոսանքներուն , որոնք որչափ լեցուին , այնչափ աւելի երագ կը վազեն , և որոնց ընթացքին արգելք չկրնար ըլլալ ո՛ր և իցէ թումբ :

Թէ կ'ուզես երջանիկ ըլլալ , նայէ քիչ բանի կարօտ ըլլաս , և ջանա միշտ կիրքերդ ու յօժարութիւններդ մեռած պահել :